ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4070-Ա « 20 » օգոստոսի 2026 թ.

ԵՐԵՎԱՆ, ՇԵՆԳԱՎԻԹ, ՄՈՒՍԱԵԼՅԱՆ ՓՈՂՈՑ Հ.2 ՀԱՍՑԵԻ
ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ՎԱՀԱՆ ՍԱՄՎԵԼԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ, ԱՐԹՈՒՐ ՍԱՄՎԵԼԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ, ԱՆԱՀԻՏ
ՎԱՉԳԵՆԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Վահան Սամվելի Վարդանյանի (ծնված 23.10.1975թ.), Արթուր Սամվելի Վարդանյանի (ծնված 23.02.1978թ.), Անահիտ Վազգենի Հայրապետյանի (ծնված 27.10.1954թ.) դիմումը: Երևան, Շենգավիթ վարչական շրջան, Մուսաելյան փողոց հ.2 հասցեում՝ ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 461.08քմ, որից 287.45քմ մակերեսով հողամասը Վահան Սամվելի Վարդանյանին, Արթուր Սամվելի Վարդանյանին, Անահիտ Վազգենի Հայրապետյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 18.11.2020թ. հ.18112020-01-0176):

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, ՀՀ կադաստրի կոմիտեի 15.01.2026թ. հ.ԱՏ-15012026-01-1382, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 18.03.2026թ. հ.Հ-1566 գրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 03.04.2026թ. հ.20-Ել-140722 եզրակացությունը, համաձայն որի Երևան, Շենգավիթ վարչական շրջան, Մուսաելյան փողոց հ.2 տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1, 2, 3 կետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով.

1. Վերականգնել Երևանի Շենգավիթ, Մուսաելյան փողոց հ.2 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Վահան Սամվելի Վարդանյանի, Արթուր Սամվելի Վարդանյանի, Անահիտ Վազգենի Հայրապետյանի սեփականության իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 287.45քմ մակերեսով հողամասին կից 173.63քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց

սեփականության իրավունքը 173.63քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետի կողմից հաստատված հատակագծով:

3. Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը, Երևան, Շենգավիթ վարչական շրջան, Մուսաելյան փողոց հ.2 հասցեում գտնվող 461.08քմ հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

6. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ